# ՎՐԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆ» (ՆԱԽԱՐՈՒՅԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 57 - 58 (16860) ՇԱԲԱԹ 18 ՀՈՒԼԻՍԻ 2020 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԿՆԵՐԴՆԵՆՔ ՖԻՆԱՆՍՆԵՐ ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՕԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ»

*Հուլիսի 16-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, անցկացվեց կառավարության հերթական նիստը, որտեղ քննարկվեցին հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում, երկրի քաղաքացիներին եւս մեկ անգամ ֆինանսական օգնություն ցուցաբերելու հնարավորությունները:*

Ինչպես հայտարարեց վարչապետը՝ կառավարությունը կգործարկի անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի մեկ անգամ եւս օգնություն ցուցաբերի, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, ֆինանսական ծանր իրավիճակում հայտնված քաղաքացիներին:

- Չնայած բոլոր այն համեմատաբար դրական միտումներին, որոնք այսօր գրանցում է վրացական տնտեսությունը, համավարակով պայմանավորված ցնցումներն ու այդ ցնցումների ազդեցությունը շարունակվելու են առնվազն մինչեւ տարեվերջ: Հետեւաբար, որքան հնարավոր է, մենք պետք է մեկ անգամ եւս վերանայենք բոլոր սոցիալական խմբերը, եւ որտեղ դրա պարտադիր անհրաժեշտությունը կա՝ ռեսուրսներ ուղղորդենք, որպեսզի օգնենք մեր քաղաքացիներին,- նշեց Գիորգի Գախարիան:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՍՏԱՀԵԾՆՈՒՄ ԵՄ՝ ՈՉ ՄԻ ՍԱԴՐԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՉԻ ՄՆԱ»

*Հուլիսի 12-ին ադրբեջանական զինված միավորումները իրականացրին հերթական սադրիչ գործողություն՝ այս անգամ Հայաստան-Ադրբեջան սահմանագծի հայկական Տավուշի մարզում: Հայկական կողմի զինծառայողները կանխեցին ադրբեջանցիների Հայաստանի տարածք թափանցելու փորձը:*

Հուլիսի 13-ին, Հայաստանի կառավարության արտահերթ նիստում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով նախօրեին հայ-ադրբեջանական սահմանի ռազմական միջադեպին, նշեց, որ հուլիսի 12-ին, Ադրբեջանի զինված ուժերը սադրիչ գործողություններ են ձեռնարկել հայ-ադրբեջանական սահմանին՝ գրոհելով Տավուշի մարզի Մովսես գյուղի ուղղությամբ տեղակայված մեր սահմանային դիրքերը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ 68 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՒԺԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ Է 3 550 054 ՊՈՏԵՆՑԻԱԼ ԸՆՏՐՈՂ

*Վրաստանում խոհրդարանական ընտրությունները կանցկացվեն ընթացիկ տարվա հոկտեմբերի 31-ին: Մինչեւ հուլիսի 15-ը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում էր խորհրդարանական ընտրություններին մասնակցություն հայտնած կուսակցությունների հայտերը:*

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների համաձայն՝ 68 կուսակցություն է դիմել, որից մեկի գրանցումը մերժվել է, 14-ը գրանցվել է, մնացածի հայտերն ուսումնասիրման փուլում են: Ուսումնասիրման վերջնաժամկետը հոկտեմբերի 1-ն է:

Ինչպես արդեն հաղորդել ենք, խորհրդարանի կողմից ընդունված սահմանադրական փոփոխությունների փաթեթում նախատեսված էր նաեւ ընտրությունների համար կուսակցությունների գրանցման ընթացակարգի դյուրացում: Մասնավորապես, ստորագրություններ հավաքելու անհրաժեշտություն կլինի միայն այն կուսակցությունների համար, որոնց թեկնածուները 15 հազարից պակաս ձայն են հավաքել՝ 2018-ի նախագահական ընտրություններին: Միաժամանակ, 10 հազար ստորագրության փոխարեն բավական է՝ կուսակցությունը ներկայացնի իր կողմնակիցների 5 հազար ստորագրությունը:

Նշենք, որ գործող օրենսդրությամբ, կոնկրետ՝ «Վրաստանի ընտրական օրենսգրքի» համաձայն, արդարադատության նախարարության ենթակայության տակ գտնվող ծառայությունների զարգացման գործակալությունը պետք է տարեկան երկու անգամ ԿԸՀ-ին փոխանցի անհրաժեշտ տվյալներ: Ելնելով դրանից՝ հուլիսի 15-ին, Վրաստանի արդարադատության նախարարության պետական ծառայությունների զարգացման գործակալությունը Կենտրոնական ընտրական հանձ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹՇՆԱՄՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՅՍ ՕՐԵՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ»

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին իր մտահոգությունը հայտնեց հուլիսի 12-ին Հայաստան-Ադրբեջան սահմանագծում վերսկսված ռազմական գործողությունների առնչությամբ:

«Այսօր, երբ մենք բոլորս միասին պայքարում ենք անտեսանելի թշնամու դեմ, միջազգային համերաշխությունը եւ գլոբալ կայունությունը մեծ նշանակություն ունեն:

Մեր տարածաշրջանում խաղաղությունն ու անվտանգությունը շատ կարեւոր են ինչպես Վրաստանի, այնպես էլ՝ նրա բարեկամ եւ գործընկեր երկրների հետագա զարգացման եւ բարգավաճման համար»,- ասված է Վրաստանի նախագահի հայտարարության մեջ:

Վրաստանի նախագահը հույս է հայտնել, որ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն ժամանակին եւ խաղաղ բանակցությունների ճանապարհով խուսափել հետագա լարվածությունից:

## ԴԱՎԻԹ ՉԱԼԿԱԼԻԱՆԻ. «ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԴԱԴԱՐԵՑՎԵՆ»

*Հուլիսի 17-ին, Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Չալկալիանին, լրագրողների հետ հանդիպմանը, հայտարարեց, որ հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը խիստ վերահսկվում է:*

Նա կողմերին կոչ արեց վերադառնալ այն իրավիճակին, որը տիրում էր մինչ ռազմական գործողությունների բռնկումը:

- Ես սերտ կապի մեջ եմ իմ գործընկեր-նախարարների հետ: Հեռախոսազրույցներ եմ ունեցել երկու նախարարների հետ եւ հայտնել մեր անկեղծ վերաբերմունքն ու մտահոգությունը՝ կապված ստեղծված իրավիճակի հետ: Նրանք գիտեն մեր դիրքորոշումը: Մենք շահագրգռված չենք իրավիճակի հետագա սրմամբ, ընդհակառակը, կողմերը պետք է վերադառնան այն իրավիճակին, որը գոյություն ուներ մինչեւ ռազմական գործողությունների բռնկումը,- հայտարարեց Դավիթ Չալկալիանին եւ հավելեց, որ հակամարտությունն առաջին հերթին դուրս է եկել Լեռնային Ղարաբաղի աշխարհագրությունից եւ այս պահին անմիջապես գտնվում է հայ-ադրբեջանական սահմանի մերձակայքում:

Չալկալիանին կողմերին կոչ է արել անհապաղ վերջ տալ հակամարտությանը եւ միջազգային մեխանիզմների միջոցով հասնել լարվածության թուլացմանը՝ ստորագրելով խաղաղության համաձայնագիր:

COVID - 19.

## ԵՐԿՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՆ ԿՊԱՀԱՆՋՎԻ ՆԱԵՎ ԱՊԱԳԱՅՈՒՄ

*Կորոնավիրուսով պայմանավորված երկրում ապագայում էլ կպահանջվի բացառիկ ուշադրություն եւ մոբիլիզացիա, որպեսզի պահպանվի իրավիճակի անվտանգություն:*

Այդ մասին խորհրդարանի լիագումար նիստում հայտարարեց խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն:

- Ցավոք, համաշխարհային մասշտաբով կորոնավիրուսով պայմանավորված, իրավիճակը չի բարելավվում: Ավելանում է վարակվածների թիվը: Կանխիչ միջոցառումներն ու համակարգային արձագանքը, որոնք Վրաստանի խորհրդարանի օրենսդրական աջակցությամբ իրականացրեց երկրի կառավարությունը, երկրում ապահովվեց կայուն իրավիճակ: Վարակվածների թիվն այսօր մեծ չէ, նաեւ ավելանում է առողջացածների թիվը: Բարեբախտաբար, վերջին ժամանակաշրջանում մահացածների թիվը չի ավելացել,- ընդգծեց Արչիլ Թալակվաձեն:

(Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱԿԱՇԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

# ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԿՆԵՐԴՆԵՆՔ ՖԻՆԱՆՍՆԵՐ ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՕԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վարչապետը ֆինանսների նախարարությանը հանձնարարեց վերանայել այն քաղաքացիների ցուցակը, որոնց պետությունը ցուցաբերել է սոցիալական նպատակային օգնություն եւ՝ մտածել, թե ինչ կարելի է անել նաեւ նրանց համար:

Գիորգի Գախարիայի խոսքով՝ գյուղատնտեսության ուղղությունը «զարգանում է դինամիկ», ավելի քան 70 հազար ֆերմեր արդեն օգտվել է պետության աջակցության ծրագրից: Նա գյուղատնտեսության նախարարին հանձնարարեց ուշադրությունը կենտրոնացնել խաղողի եւ պնդուկի բերքահավաքի մոտեցող սեզոնին:

Անդրադառնալով տնտեսական իրավիճակի թեմային՝ վարչապետը նշեց, որ կառավարությունը հենվել է տնտեսական ոլորտում ավելի հոռետեսական կանխատեսումների վրա:

Նրա խոսքով, չնայած բացասական սպասումներին, Վրաստանի էկոնոմիկայում որոշակի դրական նշաններ են ի հայտ եկել: Ակտիվությունը զբոսաշրջության ոլորտից դուրս ակնհայտ աճում է, ֆինանսական հատվածում կան բավական դրական ցուցանիշներ ինչպես հարկային եկամուտների, այնպես էլ՝ ընթացիկ հաշվեկշռի տեսանկյունից:

- Պետք է հաշվի առնել նաեւ, որ չնայած մեր հոռետեսական կանխատեսումներին, եթե հաշվի չառնենք վերաարտահանումը, ինչն առաջին հերթին ցույց է տալիս տարածաշրջանի տնտեսության վիճակը, արտահանման անկումը կազմում է մոտ 6-7 տոկոս, մինչդեռ մեր հաշվարկներն ավելի հոռետեսական էին,- ասաց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ ակտիվությունն ակնհայտ աճել է մի քանի ոլորտներում, հատկապես՝ պետական աջակցության ծրագրի հայտարարումից հետո: Այսպիսով, վերջին ամիսներին, շինարարության ուղղությամբ զգալի աճել է անշարժ գույքի եւ շինանյութերի վաճառքը:

Վարչապետի համոզմամբ՝ այս ամենը արդյունքն էր երկրի ու նրա քաղաքացիների կորոնավիրուսի դեմ արդյունավետ պայքարի:

- Այս ամենը միայն այն բանի արդյունք է, որ մենք, մեր երկրի քաղաքացիները կարողացել ենք արդյունավետ կառավարել վարակը: Սա տնտեսության արագ վերականգնման բանալին է,- ընդգծեց վարչապետը:

Հիշեցնենք, որ, պաշտոնական տվյալներով մինչ օրս Վրաստանի 721 հազար քաղաքացի արդեն ստացել է պետության կողմից սոցիալական օգնություն: Դրամական փոխհատուցումը վճարվում է ինքնազբաղ քաղաքացիներին, ինչպես նաեւ՝ բոլոր այն աշխատողներին, ովքեր համավարակի ընթացքում կորցրել են եկամուտը կամ աշխատանքը: Բացի այդ, միանվագ օգնություն է ցուցաբերվում այն քաղաքացիներին, ովքեր սեզոնային աշխատանք ունեին տարբեր երկրներում:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ 68 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նաժողովին հանձնեց օրվա դրությամբ գոյություն ունեցող պոտենցիալ ընտրողների տվյալների բազան, ըստ որի ցանկում կա 3 550 054 հավանական ընտրող: Գերատեսչության պարզաբանմամբ՝ այդ ցուցակում են ինչպես Վրաստանում, այդ թվում նաեւ բռնազավթված տարածքներում բնակվող անձինք, այնպես էլ՝ արտերկրներ բնակության մեկնած Վրաստանի քաղաքացիներ:

Հիշեցնենք, որ, արդարադատության նախարարի նախաձեռնությամբ միջոցառումների արդյունքում, անցած յոթ տարիների ընթացքում, ընտրողների պոտենցիալ ցուցակները կատարելագործվել են, կոնկրետ 2 833 201 քաղաքացի ստացել է անձը հաստատող թվային վկայական, այստեղից 1 734 652 մարդ այդ փաստաթուղթը ստացել է անվճար:

# ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵՆ՝ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԻ ՂԵԿԱՎԱՐ

***Հուլիսի 15-ին, «Վրացական երազանք» կուսակցության կենտրոնական գրասենյակում, կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլու նախագահությամբ, անցկացվեց նիստ, որի ընթացքում քննարկվեցին հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին նախապատրաստմանն առնչվող հարցեր:***

Մասնավորապես, ձեւակերպվեց կուսակցության ընտրական շտաբը՝ կուսակցության գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեի գլխավորությամբ:

Նիստում, շտաբի նորընտիր ղեկավարը մանրամասն խոսեց նախընտրական փուլում իրականացվելիք միջոցառումների, նախընտրական քարոզարշավի կազմակերպման մասին:

Քննարկվեցին նախընտրական այլ հարցեր: Մասնավորապես, անցկացվեցին քննարկումներ, թե ով ինչ կերպ է մասնակցելու նախընտրական քարոզարշավին:

Ինչպես նիստի ավարտին հայտարարեց Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Գիա Վոլսկին՝ ամենայն հավանականությամբ, նախընտրական քարոզարշավին կներգրավվի նաեւ կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին:

- Կուսակցության առաջնորդը կներգրավվի նախընտրական քարոզարշավին: Այս պահին քննարկում ենք, թե ով ինչ կերպ է մասնակցելու նախընտրական քարոզարշավին, թե որ շրջաններն ենք մեկնելու եւ այլն, այս գործողություններին մասնակցելու է նաեւ մեր կուսակցության նախագահը,- ասաց Գիա Վոլսկին:

# ԽԱՂԱՂ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԲԽՈՒՄ Է ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻՑ

***Թբիլիսիի քաղաքապետ, «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեի հայտարարությամբ՝ այսօր ամենից շատ իշխանությունն է շահագրգռված, որպեսզի ընտրություններն անցկացվեն խաղաղ միջավայրում, եւ ընտրություններին տրվի բարձր գնահատական, ինչպես եւ նախորդ ընտրությունների ժամանակ:***

Նրա խոսքով՝ ընդդիմությունը եւս պատասխանատու է, որպեսզի ընտրությունները անցկացվեն խաղաղ միջավայրում, քաղաքական բոլոր սուբյեկտներին տրվի հնարավորություն՝ ազատ միջավայրում վարել ընտրարշավը:

- Մենք ստանձնում ենք պատասխանատվություն, որ ընտրությունները անցկացվեն խաղաղ ու ազատ միջավայրում, սակայն դա չի նշանակում, որ պատասխանատվությունը պետք է ստանձնի միայն իշխանությունը: Պատասխանատու է նաեւ ընդդիմությունը, քանի որ այն քաղաքականության մաս է, եւ եւս ունի պատասխանատվություն, որ ընտրությունները անցկացվեն խաղաղ միջավայրում, քաղաքական բոլոր սուբյեկտներին տրվի հնարավորություն՝ ազատ միջավայրում վարել ընտրական քարոզարշավը: Այսօր ամենից շատ իշխանությունն է շահագրգռված, որպեսզի ընտրությունները անցկացվեն խաղաղ միջավայրում եւ ստանանք բարձր գնահատականներ, ինչպես դա տեղի ունեցավ նախորդ ընտրությունների ժամանակ,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ՎԱՐԿԱՆԻՇ

# ԳԼՈԲԱԼ ԻՆԴԵՔՍՈՒՄ ՎՐԱՑԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ 15-ՐԴ ՏԵՂՈՒՄ Է

***Անձնագրերի հզորության գլոբալ ինդեքսը (The Passport Index), չնայած կորոնավիրուսի պատճառով հաստատված ճանապարհորդական սահմանափակումներին, թարմացվել է:***

Ըստ նոր տվյալների՝ ուժի առումով, վրացական անձնագիրն այժմ գտնվում է 15-րդ տեղում: 2019 թվականին Վրաստանն այս ցանկում զբաղեցնում էր 39-րդ տեղը: Ցուցակում առաջին տեղը զբաղեցնում են՝ Ճապոնիան եւ Նոր Զելանդիան:

«Անձնագրերի ինդեքս»-ը ինտերակտիվ առցանց գործիք է, որն առաջարկում է տեղեկություն՝ տարբեր երկրների անձնագրերի մասին: Ծառայությունը պատկանում է կանադական Arton Capital խորհրդատվական ընկերությանը:

Ըստ կայքի՝ վրացական անձնագրեր ունեցող քաղաքացիներն առանց այցեգրի կարող են մուտք գործել 57 երկիր, 35 երկիր մուտք գործելիս՝ նրանք այցեգիր են ստանում սահմանին, իսկ 106 երկրների հետ անհրաժեշտ է անձնագիր:



ԼԵՀԱՍՏԱՆ

## ԱՆՋԵՅ ԴՈՒԴԱՆ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

*Հուլիսի 12-ին, Լեհաստանում անցկացված նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով, գործող նախագահ Անջեյ Դուդան ձայների 51,21 տոկոսով վերընտրվեց երկրի նախագահ: Նրա մրցակից, ընդդիմադիր «Քաղաքացիական կոալիցիայից» թեկնածու Ռաֆալ Տշասկովսկին հավաքեց ձայների՝ 48,79 տոկոսը:*

*Ընտրություններին մասնակցությունը կազմել է 68,12 տոկոս:*

*Հիշեցնենք, որ, հունիսի 28-ին անցկացված առաջին փուլում, Դուդան ստացել էր ձայների 43,5 տոկոսը, Տշասկովսկին՝ 30,46 տոկոսը: Անջեյ Դուդան նախագահի պաշտոնն զբաղեցնում է 2015 թվականի օգոստոսից:*

ԱԴՐԲԵՋԱՆ

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԵՌԱՑՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ, ԻՍԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

*Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը աշխատանքից հեռացրել է արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովին:*

*Ավելի վաղ երկրի նախագահը քննադատել է արտգործնախարարին: Ըստ Ալիեւի՝ արտգործնախարարը ոչ մի կերպ չի արձագանքել, երբ հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը լարվել է:*

*Նախագահի հրամանագրով արտաքին գործերի նախարարի պաշտոնում նշանակվել է Ջեյհուն Բայրամովը, ով 2018 թվականից զբաղեցնում էր կրթության նախարարի պաշտոնը:*

*Այս օրերին Ադրբեջանի պետական անվտանգության ծառայությունը ձերբակալել է երկրի պաշտպանության նախկին նախարար Ռահիմ Գազիեւին: Նա մեղադրվում է հակապետական կոչեր տարածելու մեջ: Գազիեւի ձերբակալությունն առնչվում է հայ-ադրբեջանական սահմանագծում տեղի ունեցած միջադեպին: Ծառայության տեղեկատվության համաձայն՝ հուլիսի 12-ին եւ 13-ին պաշտպանության նախկին նախարարը նպատակամղված սոցիալական ցանցով տարածում էր սադրիչ տեղեկատվություն, որը չէր համապատասխանում իրականությանը: Նա քաղաքացիներին գործողության կոչ էր անում, որը կթուլացներ երկրի պաշտպանունակությունը, ինչպես նաեւ կհանգեցներ զանգվածային իրարանցման:*

ԱՄՆ

## ԲՅՈՒՋԵՆ՝ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՊԱԿԱՍՈՐԴՈՎ

*ԱՄՆ-ի բյուջեի պակասորդը հունիս ամսին հասել է 864 միլիարդ դոլարի ռեկորդային նշագծի:*

*Երկրի ֆինանսների նախարարության տվյալներով՝ պակասորդը ավելի քան կրկնակի գերազանցել է մայիսի համանման ցուցանիշը եւ գրեթե տասն անգամ՝ անցյալ տարվա հունիսի ցուցանիշը:*

*Բացի այդ, հունիս ամսին բյուջեի եկամուտների կրճատումը հասել է գրեթե ողջ 2019 ֆինանսական տարվա պակասորդի չափին: Ինչպես նշել են գերատեսչությունում, ցուցանիշի անկումը կապված է կորոնավիրուսի տարածման դեմ պայքարի համար դաշնային կառավարության աճող ծախսերի հետ, ինչպես նաեւ հարկային մուտքերի կրճատման հետ:*

*Ավելացնենք, որ ԱՄՆ-ում, 30 տարվա մարման ժամկետով, հիպոթեքային վարկի հարկադրույքը, պատմության մեջ առաջին անգամ, իջել է մինչեւ 2,98 տոկոս ռեկորդային ցածր ցուցանիշի:*

# Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***Հուլիսի 14-ին, Եվրախորհրդարանը տեղեկատվություն է տարածել Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ասոցիացման համաձայնագրի կատարման եզրահանգման մասին:***



Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում՝ Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ասոցիացման համաձայնագրի կատարման վերաբերյալ եզրահանգմանը, աջակցել է հանձնաժողովի 56 անդամ, դեմ են դուրս եկել, 8-ը, իսկ 6-ը՝ ձեռնպահ մնացել:

Եվրախորհրդարանի անդամները ողջունում են Եվրամիություն-Վրաստան հարաբերությունների խորացման շարունակությունը եւ ճանաչում են երկրի վերջին առաջընթացը՝ համապարփակ ընդհանուր բարեփոխումների իրականացման գործում, որոնք Վրաստանը դարձրել են տարածաշրջանում Եվրամիության հիմնական գործընկերը:

Եվրոպատգամավորները կոչ են անում նաեւ Վրաստանի իշխանություններին զերծ մնալ լրատվամիջոցների ազատությանը միջամտելուց, լրատվամիջոցների սեփականատերերի դեմ քաղաքական դրդապատճառներով դատական գործ հարուցելուց, եւ՝ քայլեր ձեռնարկել ապատեղեկատվական արշավները կանխելու ուղղությամբ:

Զեկույցում խոսվում է նաեւ Ռուսաստանի կողմից Վրաստանի շրջանների բռնազավթման մասին:

Պատգամավորները դատապարտում են Վրաստանի տարածքում, Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջաններում բնակվող մարդկանց իրավունքների եւ ազատությունների համակարգված խախտումները, որոնք իրականացվում են ռուսական ուժերի կողմից:

## ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՎՏԱՆԳ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐԱՑՎԱԾ ՑԱՆԿՈՒՄ

***Հուլիսի 16-ին, Եվրամիության խորհուրդը թարմացրեց անվտանգ երկրների ցանկը: Նոր ցանկում 14 երկրի փոխարեն ընդգրկվել է 12 երկիր:***

Անվտանգ երկրների ցանկում չեն այլեւս՝ Սերբիան եւ Մոնտենեգրոն: Անվտանգ երկրների ցանկում, Եվրամիության անդամ մի քանի երկրների հետ, իր կայուն տեղն է զբաղեցնում Վրաստանը:

Նորացված ցանկով, Եվրամիության խորհուրդը անդամ երկրներին դիմում է հանձնարարականով՝ բացել սահմանները Ալժիրի, Ավստրալիայի, Կանադայի, Վրաստանի, Ճապոնիայի, Մարոկկոյի, Նոր Զելանդիայի, Ռուանդայի, Հարավային Կորեայի, Թայլանդի, Թունիսի եւ Ուրուգվայի հետ:

Անվտանգ երկրների ցանկում է նաեւ Չինաստանը, սակայն Չինաստանի հետ երթեւեկությունը կվերականգնվի այն բանից հետո, երբ երկիրը կբացի սահմանները Եվրամիության համար:

ՏԱՐԱԴՐԱՄ

## ԼԱՐԻՆ ԳՏԱՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ԿԵՏԸ ԵՎ ՄԻՆՉԵՎ ՆՈՅԵՄԲԵՐ ԿՈՒՐՍԸ ԿՊԱՀՊԱՆՎԻ

### ՕԳՈՍՏՈՍԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԻ ՈՐՈՇԱԿԻ ԱՄՐԱՑՈՒՄ, ԱՊԱ՝ ԱՐԺԵԶՐԿՈՒՄ, ԹԵՊԵՏ ՄԻՆՉԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ՄԻ ԿՏՐՈՒԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԼԻՆԻ

***Լարին նախընտրական ժամանակահատվածում գտավ հավասարակշռության նոր կետ եւ, արտակարգ իրավիճակից հետո, արդեն երրորդ շաբաթն է՝ կայուն պահպանում է դոլարի հանդեպ 3,04-3,07 նշագիծը:***

Վերլուծաբանների հայտարարությամբ՝ իրավիճակը կպահպանվի մինչեւ նոյեմբեր, որից հետո, ենթադրաբար, կարող է վավերացվի արժեզրկումը:

Ֆինանսիստ, միջազգային կանխագծումների եւ հետազոտությունների կենտրոնի փոխնախագահ Նիկա Շենգելիան մեզ հետ զրույցում նշեց, որ ներկայիս կուրսով լարին կպահպանվի մինչեւ հոկտեմբեր: Ինչ վերաբերում է արժեզրկմանը, ապա Ազգային բանկը իր տնօրինության տակ ունի այնպիսի ռեզերվներ, որով կկարողանա 3,0 նշագծում պահպանել լարիի կայունությունը:

- Կարծում եմ, որ մինչեւ դեկտեմբեր ազգային տարադրամի կուրսը, վերոնշյալ նշագծի շրջանագծում, կպահպանվի, թեպետ, կայունության պահպանման համար, Ազգային բանկը ստիպված կլինի ծախսել 250-300 ԱՄՆ դոլար,- հայտարարեց Շենգելիան:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱԽՍՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 170 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

***Ինչպես հայտարարեց Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովի նախագահ Դավիթ Նարմանիան՝ երեք ամսվա ընթացքում, բնակչության կոմունալ վճարումների նպաստավորման համար, ծախսվել է ավելի քան 170 միլիոն լարի:***



- Կոմունալ վճարումների մարման համար կառավարությունը երեք բաժիններով, այսինքն՝ էլեկտրաէներգիայի, գազամատակարարման եւ ջրամատակարարման բաժինների, ինչպես նաեւ մունիցիպալիտետների մաքրման ծառայության բաժանորթային վճարումների համար, ում դա առնչվում էր, ծախսեց ավելի քան 170 միլիոն լարի: Կոմունալ վճարումների հետագա սուբսիդավորման մասին խոսք չի եղել,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

Հիշեցնենք, որ, կառավարության որոշմամբ, քաղաքացիները, ովքեր ամսական ծախսում էին 200 կիլովատից քիչ էլեկտրաէներգիա եւ 200 խորանարդ մետր ծավալից նվազ բնական գազ, մարտ, ապրիլ եւ մայիս ամիսներին լրիվությամբ ազատվեցին կոմունալ վճարումներից:

ԼԱՎ ԼՈՒՐ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

## ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ... ՀԱՅՐԵՐԻՆ

***Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի անկախ պատգամավոր Դմիտրի Ցքիտիշվիլին՝ Վրաստանի աշխատանքային օրենսգիրքը մոտ ժամանակներս էական փոփոխություններ կմտցնի, ինչը թույլ կտա կարգավորել հարաբերությունները գործատուների եւ վարձու աշխատողների միջեւ:***

Դմիտրի Ցքիտիշվիլու խոսքով՝ մասնավորապես կփոխվի ստաժորների մասին օրենքը՝ եթե մինչ օրս ստաժորն ընկալվում է որպես անվճար աշխատուժ, ապա, աշխատանքային օրենսգրքում մտցված փոփոխությունից հետո, նման մոտեցում չի լինի: Աշխատանքային օրենսգրքում կփոխվի նաեւ խտրականության թեման, կվերանայվեն ֆիզիոլոգիական արձակուրդի կանոնները, ըստ որի՝ նման արձակուրդից կարող է օգտվել նաեւ հայրը: Թեպետ բոլոր դեպքերում, ֆիզիոլոգիական արձակուրդի գումարը՝ 1000 լարին, կմնա անփոփոխ:

Հստակություն կմտցվի նաեւ արտաաշխատանքային ժամանակի, ազատ օրերի նշանակման հոդվածներում: Ծրագրված է խորհրդարանի կողմից ընդունել փաթեթ, որը կհստակեցնի գործատուների եւ վարձու աշխատողների հարաբերությունները:

- Այսօր այդ հարաբերությունների հակադրությունը օրենսդրորեն կկարգավորվի,- հայտարարեց Դմիտրի Ցքիտիշվիլին:



### ՀՈՒԼԻՍԻ 13-ԻՆ ՆՇՎԵՑ ՍՎԵՏԻՑԽՈՎԼՈԲԱ ՏՈՆԸ

*Հուլիսի 13-ին Վրաց Ուղղափառ Եկեղեցին նշեց «Սուրբ գահակալների տասներկու առաքյալների ժողովը»՝ Սվետիցխովլոբան: Սվետիցխովելիի սուրբ տաճարը 12 առաքյալների անունով է կառուցվել եւ այդ պատճառով տոնը կոչվում է Սվետիցխովլոբա:*

*Վրաստանի Պատրիարք, Նորին Սրբություն Իլիա Երկրորդը, քահանայապետերի եւ հոգեւորականների հետ, Մցխեթայի Սվետիցխովելիի տաճարում պատարագ մատուցեց:*

*Նշենք, որ Սվետիցխովլոբան Վրաստանի կարեւորագույն տոներից մեկն է, եւ նշվում է տարին երկու անգամ՝ հոկտեմբերի 14-ին եւ հուլիսի 13-ին:*

### ԲԱՐՁՐԱԼԵՌ ՇՐՋԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎՍ՝ 59 ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՆ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հայտարարությամբ՝ ավելանում է այն բնակավայրերի քանակը, որոնք ունեն բարձրալեռ շրջանի կարգավիճակ: Մասնավորապես, վարչապետի հայտարարությամբ Գորիի, Դուշեթիի, Թիանեթիի, Ասպինձայի եւ Դմանիսիի մունիցիպալիտետներին, ինչպես նաեւ Գոմիի սարին կտրվի բարձրալեռ շրջանի կարգավիճակ:*

*Գախարիայի հայտարարությամբ, ընդհանուր առմամբ, բարձրալեռ բնակավայրի կարգավիճակ են ստանում 59 բնակավայրեր, որոնցից 19-ը գտնվում են Ցխինվալիի շրջանի շփման գծի երկայնքում:*

*Մինչ այժմ բարձրալեռ շրջաններում ապրողի կարգավիճակ ունի Վրաստանի 246 000 քաղաքացի, որոնց, այսօրվա որոշման արդյունքում, ավելանում է եւս 26 000 քաղաքացի: Հատկանշական է, որ, բարձրալեռ շրջանի կարգավիճակ ունեցող բնակավայրերում, մշտապես բնակվող անձինք օգտվում են եկամտահարկի եւ գույքահարկի արտոնություններից եւ այլ օգնություններից:*

### ՎԱՐԿԵԹԻԼԻԻ ՇՈՒԿԱՅԻ ՀՐԴԵՀԻ ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՍԿՍՎԵԼ Է

*«Իրաո» ապահովագրական ընկերությունն սկսել է հունիսի 15-ի երեկոյան, Թբիլիսիի Վարկեթիլիի շուկայում բռնկված հրդեհից բխած վնասի փոխհատուցումը:*

*Ներկա դրությամբ՝ «Իրաո»-ի կողմից կփոխհատուցվի 1,5 միլիոն լարիի գումար: Ընկերության փոխանցմամբ՝ փոխհատուցում կստանա 315 ձեռնարկատեր, 465 կոմերցիոն օբյեկտ: Ներկայումս օբյեկտներին հասցրած վնասի ճշտման գործընթացը շարունակվում է:*

### ԲԱԹՈՒՄԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ Է ԵՂԵԼ

*Բաթումիի քաղաքապետ Լաշա Կոմախիձեն հեռացել է պաշտոնից:*

*Նրա հայտարարությամբ՝ իր հետ միասին պաշտոնից, սեփական ցանկությամբ ,հեռանում է նաեւ փոխքաղաքապետ Զաբա Տուղուշին: Փոխքաղաքապետի պաշտոնում նշանակվել է է Աջարիայի կառավարության ապարատի ղեկավար Արչիլ Չիքովանին, հենց նա կկատարի քաղաքապետի պարտավորությունները:*

*Լաշա Կոմախիձեն չի մանրամասնում, թե որտեղ է շարունակելու իր գործունեությունը, սակայն ասում է, որ ունի բազմաթիվ առաջարկություններ եւ սեփական տեղը տեսնում է միջազգային կազմակերպություններում եւ ոչ կառավարական հատվածում:*

COVID - 19.

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

***Աշխարհում կորոնավիրուսային վարակի՝ COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 13,971 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 593 հազարը: Ապաքինվել է ավելի քան 8 միլիոն 300 հազարից ավելի մարդ:***

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող **ԱՄՆ-ում 3 695 469** հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **141 124** է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Երկրորդ տեղում **Բրազիլիան** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **2 014 738-ի**, մահացածներինը՝ **76 822-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ վարակվել է **1 005 871** մարդ, մահացել է **25 622-ը**: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **759 203** մարդ, վարակի հետեւանքով մահացել է **12 123** մարդ:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **34 001-ի**, որից մահացել է **620-ը**, ապաքինվել՝ **22 492-ը**:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **26 165** մարդ: Վարակից մահացել է **334**, ապաքինվել՝ 17 256 մարդ:

Հուլիսի 17-ի տվյալներով՝ **Վրաստանում** վարակվել է **1010** մարդ, մահացել է **15-ը**, ապաքինվել է **885-ը**:

## ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՋԵ. «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԲՌՆԿՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱՀԻ»

***Ինչպես հայտարարեց Վրաստանի հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն՝ կորոնավիրուսի բռնկումը հնարավոր է ամեն րոպե, հետեւաբար, հանձնարարականները չպետք է ձեւական բնույթ կրեն:***

Ն ա բնակչությանը կոչ ա ր ե ց պահպանել զգուշություն, քանի որ «կորոնավիրուսը ոչ մի տեղ չի գնացել, այն մեզ հետ է»: Նրա խոսքով՝ Վրաստանում վարակման վերջին օրերին բացահայտված դեպքերը հատուկ են:

- Մինչ այժմ մեզ մոտ վարակը վերահսկվում է, բայց ես շեշտում եմ, որ դա չպետք է մեզ հանգստացնի, եւ ամեն րոպե կարող է տեղի ունենալ կորոնավիրուսի բռնկում: Դրանից ելնելով՝ հանձնարարականները չպետք է ձեւական բնույթ կրեն եւ, առաջին հերթին, դա մեր քաղաքացիական պատասխանատվությունն է: Հետեւաբար, ես բոլորին խնդրում եմ՝ լինի դա պաշտպանիչ դիմակ, սոցիալական հեռավորություն, անձնական կամ հասարակական հիգիենա, հավաքներից խուսափում եւ այլն, եկեք հետեւենք այս ամենին,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

## ՊԱԱՏԱ ԻՄՆԱՁԵ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՕԱԶԻՍ Է ԿՈՐՈՆԱՎՈՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ»



***Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի ղեկավարի տեղակալ Պաատա Իմնաձեն՝ շնորհակալություն հայտնեց քաղաքացիներին՝ կորոնավիրուսի դեմ կանխարգելիչ միջոցները պահպանելու համար:***

Նրա խոսքով՝ աշխատանք արվեց, սակայն, առանց մեր ժողովրդի իմաստուն գործողությունների, ոչինչ չէր ստացվի:

«Շնորհակալություն՝ ամեն ինչի համար»,- սրանք այն խոսքերն են, որոնք անընդհատ լսում եմ: Ես էլ եմ նրանց շնորհակալություն հայտնում:

Շնորհակալություն յուրաքանչյուր քաղաքացուն, որ, այս «կորոնավոր» աշխարհում, իր պահվածքով մեր երկիրը օազիս դարձրեց:

Մենք մեր աշխատանքը կատարեցինք, սակայն, առանց մեր ժողովրդի իմաստուն գործողությունների, ոչինչ չէր ստացվի,- նշեց Պաատա Իմնաձեն:

ՃԱԼԿԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ

## ՅՈՒՐԻ ԽԵՉՈՅԱՆ. «ՀՈՒՍՈՎ ԵՆՔ, ՈՐ ԱՇԽԱԼԵՑՈՒ ՎԱՐԱԿՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՍՏԱՏՎԻ»

***Բացառված չէ, որ կորոնավիրուսով վարակման առաջին դեպքն արձանագրվի նաեւ Քվեմո Քաթլիի եկրամասի Ճալկայի մունիցիպալիտետում:***

Մասնավորապես, կորոնավիրուսով վարակման որոշակի կասկածներ են ծագել մունիցիպալիտետի Աշխալա գյուղի 28-ամյա բնակչի մոտ:

Ինչպես մեզ հետ հեռախոսազրույցում ասաց Ճալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի սոցիալական հարցերով ծառայության ղեկավար Յուրի Խեչոյանը, աշխալեցի երիտասարդը Աշխալա էր եկել Հայաստանից, Մառնեուլիում 14-օրյա կարանտինն անցնելուց հետո: Հարազատ գյուղում երկու օր անցկացնելուց հետո, որի ընթացքում շփումներ է ունեցել իր ընտանիքի անդամների, ընկերների, ծանոթների հետ, անցել է հերթական թեստավորում: Այս անգամ թեստավորման արդյունքները եղել են տագնապալի, որի պատճառով երիտասադին տեղափոխել են Թբիլիսի: Հաջող օրը Թբիլիսի են տեղափոխել նաեւ նրա ծնողներին ու մոտ ընկերոջը, ում հետ առավել մոտ շփումներ է ունեցել:

Յուրի Խեչոյանի խոսքով, երիտասարդը բողոքարկում է թեստի արդյունքները, հայտարարելով, որ ինքն առողջ է եւ կորոնավիուսին բնորոշ ոչ մի ախտանիշ չունի:

Բոլոր դեպքերում, երիտասարդը, նրա ծնողներն ու ընկերը այս պահին գտնվում են 14-օրյա կարանտինի պայմաններում, որի ավարտին նորից թեստավորում են անցնելու:

«Գյուղում տարբեր խոսակցություններ են շրջանառվում, ոմանք հնարավոր են համարում գյուղի կարանտինային շրջափակումը, ոմանք հուսով են, որ թեստի տվյալները սխալ են, եւ թյուրիմացությունը կարճ ժամանակում կբացահայտվի: Բնականաբար, զգացվում է որոշակի լարվածություն: Հուսով ենք, ամեն ինչ բարեհաջող ավարտ կունենա եւ աշխալեցու վարակման փաստը չի հաստատվի»,- հեռախոսազրույցի ընթացքում հայտնեց Յուրի Խեչոյանը:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

## ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱ. «ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՎՐԱՍՏԱՆ ԿԹՈՒՅԼԱՏՐՎԻ»

***Հուլիսի 15-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, անցկացված միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստում, ընդունվեց որոշում, ըստ որի՝ Վրաստանը սահմաններ կբացի այն օտարերկրյա գործարարների եւ ինքնազբաղ քաղաքացիների համար, ովքեր ցանկանում են երկարաժամկետ մուտք գործել երկիր:***

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավայի պարզաբանմամբ՝ հատուկ պայմանների դեպքում, արտասահմանյան այն քաղաքացիներին, ովքեր կարող են հեռակա կարգով աշխատել աշխարհի ցանկացած վայրից, կթույլատրվի Վրաստան գալ, թեպետ նրանք ստիպված կլինեն մնալ երկրում առնվազն վեց ամիս:

- Խոսքը սահմանների բացման մասին է, այնպես որ, մի կողմից հնարավորինս պաշտպանենք մեր քաղաքացիների առողջությունը, մյուս կողմից՝ թույլատրենք Վրաստան մուտք գործել վերը նշված կատեգորիային պատկանող բոլոր երկրների քաղաքացիներին,- հայտարարեց նախարարը՝ հավելելով, որ Վրաստանում ապրել եւ աշխատել ցանկացող օտարերկրյա քաղաքացին պետք է նախնական թույլտվություն ստանա երկրի իշխանություններից: Դա անելու համար հարկ կլինի հայտադիմում թողնել հատուկ ստեղծված հարթակում: Դրան պետք է կցվի աշխատավայրից տեղեկանք կամ գործատուի հետ կապ հաստատելու տվյալները: Բացի այդ, օտարերկրացիները ստիպված կլինեն հաստատել 14-օրյա կարանտին անցնելու պատրաստակամությունը, որը նրանք հոգան սեփական միջոցներով: Բոլոր դիմումատուները պետք է ունենան նաեւ վեցամսյա ճանապարհորդական ապահովագրություն:

Նաթիա Թուրնավայի խոսքով՝ նախագիծը մշակվել է երկրի աստիճանական բացման ռազմավարության շրջանակներում: Վարչապետի կարգադրությամբ՝ նախաձեռնության վրա աշխատում են Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունը եւ Զբոսաշրջության ազգային վարչությունը:

Հիշեցնենք, որ մարտի 21-ից մայիսի 22-ը, Վրաստանում կորոնավիրուսի տարածումը կանխելու համար, գործում էր արտակարգ դրություն: Իշխանությունները հույս ունեին, որ երկիրը զբոսաշրջիկների համար կբացվի հուլիսի 1-ին եւ կվերականգնվի կանոնավոր միջազգային ավիաչվերթերը, բայց այս որոշումը հետաձգվեց մինչեւ հուլիսի վերջ:

Այսօրվա դրությամբ՝ Վրաստանը պայմանավորվածություն է ձեռք բերել Գերմանիայի, Ֆրանսիայի, Էստոնիայի, Լատվիայի եւ Լիտվայի հետ սահմանների անվերապահ երկկողմ բացման վերաբերյալ:

Կառավարությունը շարունակում է համագործակցել ԵՄ անդամ երկրների հետ՝ սահմանների բացման հարցով: Օտարերկրացիների Վրաստան մուտքի պայմանները, ինչպես նաեւ Վրաստանի քաղաքացիների արտասահման ուղեւորության պայմանները, վերանայվում են երկու շաբաթը մեկ անգամ:

## 45 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՍԺՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհուրդը հաստատել է՝ Վրաստանում «Տնտեսական կառավարման եւ մրցունակության զարգացման քաղաքականության միջոցառումների համար», լրացուցիչ 45 միլիոն եվրո քանակությամբ ֆինանսավորում հատկացնելու հարցը:***

Համաշխարհային բանկի Վրաստանի գրասենյակի տարածած տեղեկատվության համաձայն, բանկի լրացուցիչ ֆինանսավորումը Վրաստանի կառավարությանը կօգնի կորոնավիրուսի համավարակի ազդեցությամբ բխած անսպասելի ֆինանսական դեֆիցիտի լրացման գործում:

«Այս բարդ ժամանակաշրջանում մենք, որպես հզոր գործընկեր, Վրաստանի կողքին ենք եւ աջակցում ենք կառավարության իրականացրած հակաճգնաժամային արագ եւ արդյունավետ միջոցներին, որի նպատակը մարդու կյանքը փրկելը եւ նրանց գոյատեւման միջոցները պահպանելն է: Համաշխարհային բանկի կողմից հատկացված այս լրացուցիչ ֆինանսական միջոցները, երկրի համար, ծանր պահին ցուցաբերած պարտադիր օգնություն է»,- հայտարարել է Հարավային Կովկասում Համաշխարհային բանկի տնօրեն Սեբաստյան Մոլենյուսը:

Համաշխարհային բանկի փոխանցմամբ՝ լրացուցիչ ֆինանսական օգնությունը կապված է «Տնտեսական կառավարման եւ մրցունակության զարգացման քաղաքականության միջոցառումների համար» մինչ այդ հատկացված 45 միլիոն եվրո քանակությամբ ֆինանսավորման հետ, որը Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհուրդը հաստատել էր 2020 թվականի մարտին:

Ինչպես մեկնաբանում են Համաշխարհային բանկում, ընդգծվել է պետական ռեսուրսների կիրառման արդյունավետության բարելավումը, առավել մրցունակ շուկաներին աջակցությունը:

«Մեր երկրի համար անչափ կարեւոր է Համաշխարհային բանկի աջակցությունը, քանի որ այն կոչված է լուծելու կորոնավիրուսից բխած խնդիրները: Ցանկանում եմ մեկ անգամ եւս շնորհակալություն հայտնել մեր գործընկերներին այն աջակցության համար, որը նրանք ցուցաբերում են Վրաստանում համավարակից բխած տնտեսական վնասը նվազեցնելու եւ ընդհանրապես, երկրում բարեփոխումների իրականացման ընթացքը պահպանելու համար»,- հայտարարել է Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին:

Համաշխարհային բանկի Վրաստանի գրասենյակի փոխանցմամբ՝ նշված ֆինանսական օգնությունը, «Տնտեսական կառավարման եւ մրցունակության զարգացման քաղաքականության միջոցառումների» շրջանակներում, հաշվի առնված երեք փուլից բաղկացած վարկային գործողության երկրորդ փոխանցում է:

*էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*